ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Դեկտեմբերի 30-ին Սինոդը որոշեց հոգեւորականութեան մէջ ընդունել Կարսի շրջանի Մեծ Փարկիթ գիւղի բնակիչ Աղէքսանդր Մելիք Սարգսեանին և ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ, որի մասին և հրամանագրեց Երեւանի Փոխ թեմակալին։

Նոյն թուին հոգեւորականութեան մէջ ընդունեց Կարսի շրջանի Ուզունքիլիսա գիւղի բնակիչ Սարիբէգ Տէր Յովհաննիսեան Մահտեսի Գէորգեանին նոյն գիւղի ժողովրդի վրայ քահանայ ձեռնադրելու, որի մասին հրաման տուաւ Երեւանի Կոնսիստորիային, պատուիրելով ձեռնադրութիւնից յետոյ տեղեկացնել Թիֆլիզի տեղական բրիգադի գլխաւորին, նրա անունը պահեստի զօրաց ցուցակից հանելու։

Յունվարի 3-ին Սինոդը որոշեց մերժել Երեւանի Կոնսիստորիայի խնդիրը եկեղեցական հաշուատես վարձելու մասին։

Նոյն թուին Սինոդը որոշեց ժամանակաւոր գանձապահ կարգել տ. Համազասպ վարդապետին՝ մինչև Վեհափառ Հայրապետի գալուստը և հրաման տալ Մատթէոս վարդապետին յանձնելու նրան բոլոր հաշիւները և հետեւանքի մասին յայտնել Սինոդին։

Յունվարի 11-ին Սինոդը ստանալով Նորին Պայծառափայլութեան Կոմս Փոխարքայի հաճութիւնը, հրամայեց կարգել Երեւանի Կոնսիստորիայի Նախանդամ Լեւոն վարդապետ Փսերեանին Հին Նախիջեւանի, իսկ Թովմա վարդապետին Ղզլարի փոխանորդ։

Յունվարի 16-ին Սինոդը ստանալով Տփխիսի պ. Նահանգապետի հաճութիւնը, հրամայեց կարգել տ. Ուխտանէս վարդապետին գործակալ Ախալքալաքի և նշանակել

նրան տարեկան 600 ռուբլի, բնակարան յատկացնել եկեղեցիների հաշուով և կահկարասիքը յանձնել ցուցակի համաձայն։

Յունվարի 18-ին Սինոդը մերժեց Գեոզալդարա գիւղի բնակիչների խնդիրը Արսէն Տէր Մխիթարեանին հոգևոր կոչման մէջ ընդունելու և վիկայականները վերադարձրեց Երևանի Կոնսիստորիան։

Նոյն թուին Սինոդը որոշեց հոգևորականութեան մէջ ընդունել Սիմէոն Մատթէոսեանցին Կարմիր-Խարաբա գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու և այս մասին հրամանագրեց Երևանի Կոնսիստորին։

Նոյն թուին Սինոդը որոշեց հոգևորականութեան մէջ ընդունել Ղուզիգիդան գիւղի բնակիչ Ղևոնդ Տէր Եփրեմեան Մելիք Սարգսեանին և ձեռնադրել օգնական Ծերունի Վրթանէս քահանայի, Աղբաշ գիւղի բնակիչ Արտաշէս Տէր Դաւթեանցին և ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի վրայ, Քալարա գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր Յովհաննիսեանցին և ձեռնադրել քահանայ յիշեալ գիւղի վրայ, Ղզլքիլիսա գիւղի բնակիչ Յարութիւն Տէր Մկրտչեանին նոյն գիւղի վրայ, որոնց մասին և հրամանագրեց Երևանի Կոնսիստորիային։

Յունվարի 26-ին Սինոդը ստանալով Բաքուի Նահանգապետի հաճութիւնը նշանակեց տ. Հմայեակ վարդապետին նախանդամ Շամախու Կոնսիստորիայի և վանահայր Սաղիանի վանուց։